ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

13 Նոյեմբերի հինգշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

157
(3188)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ԱՆԴՐԱՆԻԿ ՔՈՉԱՐՅԱՆԻ ԲԱՐԿՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՊԱՏՃԱՌԸ

ԱԺ-ում երեկ իրավիճակը կրկին լարվեց. այս անգամ առանց քաղաքական ճգնաժամի, բայց մարդկային նյարդերի հաշվին: Պաշտպանության եւ անվտանգության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը ստիպված եղավ ներողություն խնդրել, երբ պարզվեց, որ բաց է թողել իր ելույթի ժամանակը բյուջետային քննարկումների ընթացքում:

Դահլիճում ստեղծված խառնաշփոթի ֆոնին նիստը ստիպված ընդմիջվեց, իսկ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, տեսնելով իրավիճակը, չթաքցրեց իր դժգոհությունը, հրապարակայնորեն նախատեց Քոչարյանին, ապա բարկացած լքեց դահլիճը:

«Քոչարյանը, որը խորհրդարանում հաճախ հիշատակվում է որպես «հին աղվես», իր հերթին դժգոհություն հայտնեց ԱԺ քարտուղարության նկատմամբ՝ մեղադրելով նրանց, թե կարող էին իրեն նախապես տեղեկացնել ելույթի հերթի մասին: Սակայն Քոչարյանը, թերեւս, մոռացել էր, որ քարտուղարությունը ոչ թե իր անձնական աշխատակազմն է, այլ խորհրդարանի ընդհանուր վարչական մարմին: Ի վերջո, նման հարցերի պատասխանատվությունը պատկանում է հենց նրա աշխատակազմին ու օգնականներին, ոչ թե քարտուղարությանը. տեղեկացնենք, որ Քոչարյանը հանձնաժողովում ունի 2 օգնական, 6-8 փորձագետ:

Սակայն այս անգամ Քոչարյանի սուր արձագանքը միայն բաց թողնված ելույթի հետեւանք չէր: Քաղաքական միջանցքներում պտտվում են խոսակցություններ, որ նրա վերաբերմունքը քարտուղարության նկատմամբ վաղուց է սրվել: Պատճառը քարտուղարության պետ Թաթուլ Սողոմոնյանի որոշումն էր, որի հետեւանքով Անդրանիկ Քոչարյանի՝ 44-օրյա պատերազմի վերաբերյալ հնացած զեկույցը ուղարկվել էր ԱԺ արխիվ՝ առանց լիագումար նիստում քննարկվելու:

Սա Քոչարյանը չի մոռացել: Նրան հատկապես զայրացրել էր այն փաստը, որ իր պատրաստած զեկույցը, որի վրա շաբաթներ էր աշխատել, քաղաքական հարթակից տեղափոխվեց փոշոտ դարակների մեջ՝ «անցումային հիշողության» կարգավիճակով:

«Ավելին, ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ Քոչարյանի վերջին նյարդային արձագանքների պատճառներից մեկը նաեւ իր ապագայի հարցն է: Թեեւ ՔՊ վարչության «ծանրքաշային» ներկայացուցիչը երաշխավորել էր նրա ընդգրկումը կուսակցության ընտրացուցակում, սակայն հենց ինքը՝ Քոչարյանը, լավ գիտի, որ քաղաքական «թարմացման ալիքը» կարող է իրեն այլեւս թույլ չտալ վերադառնալ խորհրդարան:

«Ժողովուրդ» օրաթերթին ՔՊ-ից պատմեցին, որ Անդրանիկ Քոչարյանին արդեն նախազգուշացրել են՝ սրանք խորհրդարանում գործելու նրա վերջին ամիսներն են՝ մինչեւ նոր ընտրություններ:

Հ առողջապահության ոլորտում տապալված է համընդհանուր ապահովագրության համակարգի ներդրումը. ծրագիր, որի պատասխանատուներից էր փոխնախարար Լենա Նանուշյանը: Այն համապարփակ եւ ընդգրկուն չէ, ինչի մասին խոսել է նաեւ վարչապետը: Մինչ նախարար Անահիտ Ավանեսյանը փորձում է հանրությանը բացատրել, թե երբ եւ ինչպես է գործարկվելու համակարգը, նրա տեղակալը, ըստ մամուլի հրապարակումների, զբաղված է ոչ թե աշխատանքով, այլ սոցիալական ցանցերում անլուրջ տեսանյութեր ու «սրտիկներ» հրապարակելով: Ավելին՝ մամուլը գրում է, որ Նանուշյանը ոչ միայն արդյունավետ չի աշխատում, այլեւ ընտանեկան արտոնություններից է օգտվում. փոխնախարարի որդին, ի տարբերություն նախարար Ավանեսյանի որդու, բանակ չի զորակոչվել: Այս ֆոնին առողջապահության համակարգի աշխատակիցները խոսում են անարդյունավետ կառավարման, պատասխանատվության բացակայության եւ հասարակության շրջանում վստահության նվազման մասին: Արդյունքում, խոստացված «առողջապահական բարեփոխումը» դարձել է հերթական ձախողված ծրագիր, իսկ համակարգը՝ անլուրջ վարքագծի եւ անհավասարության խորհրդանիշ:

Դեռեւս 2023 թվականի մարտի 31-ին Ռուսաստանի Դաշնության եւ Հայաստանի Հանրապետության անասնաբուժական ծառայությունների միջեւ բանակցություններ են ընթացել, այս մասին հայտնել էր «Ռոսսելխոզնադզորը»՝ ՌԴ-ի Անասնաբուժական եւ բուսասանիտարական հսկողության դաշնային ծառայությունը: Ծառայությունը խնդրել է Հայաստանի անասնաբուժական ծառայությանը 2023 թվականի ապրիլի 5-ից սկսած կասեցնել կաթնամթերքի՝ Ռուսաստան արտահանման համար տրամադրվող վկայականը: Հրապարակման մեջ նշվել էր, որ մատակարարումների վերսկսման հնարավորությունը կքննարկվի լրացուցիչ՝ հիմնվելով Հայաստանի կողմից հայտնաբերված խախտումները վերացնելու ջանքերի արդյունքների վրա: ArmLur.am-ի խմբագրություն պարբերաբար ահազանգեր են ստացվում, որ տեղական արտադրության անվան տակ շուկա է մտնում պարսկական սերուցքային հիմքով պատրաստված կարագ կամ կաթնային այլ արտադրանք, որի մի մասը մնում է այստեղ ու, ամենայն հավանականությամբ, հասնում է սպառողի սեղանին կաթի, թթվասերի, կաթնաշոռի, կարագի կամ այլ արտադրանքի տեսքով: Պնդել, որ Իրանից ներմուծվող կաթի սերուցքը վտանգում է սպառողների առողջությունը, վաղաժամ է, սակայն բաց աղբյուրների որոշակի վերլուծությունը թույլ է տալիս ենթադրել, որ խնդիր, ամեն դեպքում, կա: Այս խնդրի վերաբերյալ ArmLur.am-ը մի քանի անգամ բանավոր եւ գրավոր կերպով դիմել է Էկոնոմիկայի նախարարությանը, Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնին եւ Պետական եկամուտների կոմիտե: Այս կառույցներից, թերեւս, Պետական եկամուտների կոմիտեն էր, որ թվային որոշակի տվյալներ էր փոխանցել, սակայն ՍԱՏՄ-ին դուր չէր եկել «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողի հարցն ուղղված Փաշինյանին: ԱԺ-ում ճեպազրույցի ժամանակ «Ժողովուրդ» օրաթերթի լրագրողը վարչապետ Նիկոլ Փաշինյանին հարցրեց՝ տեղյա՞կ է նա արդյոք իրանական սերուցքի վերաբերյալ ռուսական կողմի դժգոհություններից, եւ հնարավո՞ր է՝ վերջինս հորդորի ի վերջո մանրակրկիտ ուսումնասիրել սերուցքի ծագման աղբյուրը եւ եղանակը: Փաշինյանը խոստացավ զբաղվել բարձրաձայնված խնդրով:

Շարունակությունը եւ մանրամասները՝ ArmLur.am կայքում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Մեր ձեւով» շարժման համակարգող Նարեկ Կարապետյանի՝ ԱՄՆ այցից վերադառնալուց հետո շարժման մի խումբ անդամներ հանդիպել են Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակության ներկայացուցիչների հետ: Ինչպես հայտնում են «Ժողովուրդ»-ի աղբյուրները, հանդիպումը տեղի է ունեցել փակ դռների հետեւում, եւ մամուլը ո՛չ իրավիրված էր, ո՛չ էլ տեղեկացված այդ մասին: Թե ինչ հարցեր են քննարկվել եւ ինչ նպատակով է կազմակերպվել հանդիպումը՝ այս պահին պարզել չի հաջողվել:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ. ՄԱՍ 2

«ՓԱՇԻՆՅԱՆԸ ՍՏՈՒՄ Է, ԵՐԲ ԱՍՈՒՄ Է՝ ԳՆՈՒՄ ԵՆՔ ԵՎՐՈՊԱ», ԱՇՈՏՅԱՆ

«Ժողովուրդի հարցերը» հաղորդման շրջանակում զրուցել ենք ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանի հետ: Վերջինս ներկայացրել է ՀՀԿ-ի կառավարման շրջանի ձեռքբերումները եւ ձախողումները, խոսել Հայաստան-ԵՄ կապերի մասին ՀՀ երրորդ նախագահի կառավարման շրջանում եւ անդրադարձել մի շարք այլ հարցերի, որոնց մասին նախկինում բարձրաձայնելու առիթներ չեն եղել:

Հարցազրույցի առաջին հատվածը՝ օրաթերթի նախորդ՝ 3187 համարում:

Արմեն Աշոտյան.

-Երբ Հայաստանը սկսեց ասոցացման համաձայնագրի բանակցությունները՝ Եվրոպական միության Արեւելյան գործընկերության մյուս երկրների՝ Մոլդովայի, Վրաստանի եւ Ուկրաինայի շարքում, մենք մեկ-երկու տարվա ընթացքում դարձանք բարեփոխումների չեմպիոն: Սա եվրոպացիների խոսքն է՝ ուղղված մեզ: Երբ 2017 թվականին ստորագրվեց ՍԵՊԱ-ն, այնտեղ Լեռնային Ղարաբաղի խնդրի կարգավորման մասով մեզ հաջողվեց Մինսկի խմբի համանախագահների կողմից արտահայտված հայկական դիրքորոշումները՝ ժողովրդի ինքնորոշման իրավունքի սկզբունքը, դարձնել լուծման պարտադիր սկզբունք ԵՄ անդամ բոլոր 28 երկրների համար (այն ժամանակ Մեծ Բրիտանիան դեռ չէր լքել ԵՄ-ն): Բացի դրանից, ՍԵՊԱ-ն երկրի բոլոր ոլորտների բարեփոխումների հստակ քարտեզ էր, որը մենք ստացել էինք դեռ 2017-ին:

Մենք ստանձնել էինք պարտավորություն՝ այդ բարեփոխումները կյանքի կոչելու, սակայն 2018-ին ոչ միայն չհաստատինք դա, այլեւ, ինչպես տեսնում եք, գործող իշխանությունը դրանք տոտալ տապալեց: Ահա թե ինչու եմ ասում, որ Նիկոլ Փաշինյանը ստում է, երբ հայտարարում է, թե Հայաստանը գնում է դեպի Եվրոպական միություն եւ այլն: Բազմաթիվ փաստարկներից բացի՝ կա եւս մեկը. դեպի ԵՄ գնացող երկիրը պետք է իրական բարեփոխումներ իրականացնի, իսկ այդ բարեփոխումների հիմքում պետք է լինի համապատասխանությունը եվրոպական ստանդարտներին: Այդ ստանդարտները հստակ ամրագրված են ՍԵՊԱ փաստաթղթում, որի նպատակը այս ճանապարհային քարտեզով շարժվելն ու մոտարկվելն է Եվրոպական միությանը:

Սակայն փաստն այն է, որ ՍԵՊԱ-ի իրականացումը մինչ օրս կատարված է ընդամենը 40 տոկոսով: Այսինքն՝ ԵՄ-ին մոտենալու, բարեփոխումներ իրականացնելու ուղին ամբողջությամբ կանգ է առել: Իսկ ԵՄ-ին ձգտող, բարեփոխվող երկիրը պետք է ամեն ինչ մի կողմ դնի ու զբաղվի հենց այդ գործընթացով: Այժմ հարց եմ տալիս. «բարեփոխումներ» եւ «Նիկոլ Փաշինյան»՝ կարելի՞ է այս երկու բառերը մեկ նախադասության մեջ դնել: Ո՞ր մեծածավալ ծրագիրն է նա իրականացրել մինչեւ վերջ: Չկա գեթ մեկը:

-Պարոն Աշոտյան, ըստ Ձեզ, ժողովուրդը չհասկացա՞վ ձեզ, երբ դուրս եկավ այն ժամանակ գործող իշխանության դեմ:

-Իհարկե, այդ թեմայով շատ ենք վերլուծել եւ ընդունել մեր սխալները: Սերժ Սարգսյանը դեռ 2019 թվականին՝ Ջագրեբում ունեցած իր ելույթի ընթացքում, ասել է, որ այդ ամենում եղել են նաեւ մեր սխալները: Այսինքն՝ երրորդ նախագահը հրապարակավ խոստովանել է իր կառավարման շրջանի թերացումները:

Պատճառները, իհարկե, բազմաթիվ էին: Դրանցից մեկը այն էր, որ մենք թերագնահատել էինք ժողովրդի հոգնածության աստիճանը, ինչպես նաեւ ժամանակակից քաղաքական շփման, PR տեխնոլոգիաների ու սոցիալական մեդիայի ազդեցությունը: Թող դա անմամեստ չհնչի, բայց պետք է նշեմ, որ դեռ տարիներ առաջ՝ քաղաքական ակտիվ գործիչներից առաջիններից էի, եթե ոչ առաջինը, ով մտել էր «Ֆեյսբուք»: Մի ժամանակ նույնիսկ ամենաշատ հետեւորդներ ունեցող հայ օգտատերերից էի: Երբեք չեմ խուսափել նաեւ բողոքի ակցիաներին ներկա գտնվելուց: Անկախ այն հանգամանքից, թե ինչ քննարկումների տեղիք կարող էր դա տալ, ես համոզված էի, որ ժամանակները փոխվում են:

Ինձ հաճախ էին քննադատում՝ «Աշոտյան, դու Կրթությա՞ն նախարար ես, թե՞ ֆեյսբուքյան»: Մարդիկ չէին գիտակցում, որ քաղաքական հաղորդակցության մեթոդներն արդեն փոխվում էին: Ես դա զգում էի՝ լինելով այդ ժամանակ ավելի երիտասարդ եւ կրթության ոլորտում աշխատանքի բերումով մշտապես երիտասարդների հետ շփման մեջ լինելով: Գուցե երբեմն չափազանցում էի սոցիալական հարթակներում ներկայությունը, ինչը այդ ժամանակվա նախարարների համար անսովոր էր, բայց այդ անմիջականությունը՝ հետեւորդներին պատասխանելը, նրանց հետ շփվելը, գիտեի, որ ապագան է:

Մեկ այլ պատճառ էլ այն էր, որ որպես նորանկախ Հայաստանում ձեւավորված առաջին անկախ քաղաքական ուժ՝ որոշ փուլում կորցրինք կապը իսկական կուսակցականների հետ: Հետո էլ խանգարեցին նրանք, ովքեր ՀՀԿ էին մտել՝ սեփական օրակարգերն առաջ մղելու եւ իշխանական լծակները օգտագործելու նպատակով:

-Պարոն Աշոտյան, խոսելով Քոչարյան-Սարգսյան հակամարտության մասին, ինչ եզրակացություն կարելի է անել, ինչ ամփոփ միտք կասեք դրա վերաբերյալ:

-Նրանք կարող են կիսել մեկ բան՝ Հայաստանի այս վիճակից դուրս գալու պատասխանատվությունը՝ միասին, իրական ընդդիմադիր, արժեքներով ու գաղափարներով իրենց համարժեք մարդկանց հետ:

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

Տեսանյութը կարող եք դիտել «ԱրմԼուր.էյէմ» կայքում:

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԻՄԻՋԻ ԼՈՒՐՋ ՀԱՐՑԵՐՈՎ Է ԶԲԱՂՎԱԾ

Ինչպես տեղեկանում ենք «Հրապարակ» օրաթերթի տարածած լուրից, Նիկոլ Փաշինյանը շատ դժգոհ է մնացել Նարեկ Կարապետյանի՝ Թաքեր Կարլսոնին տված հարցազրույցի հետեւանքներից: Հիշեցնենք՝ օրերս հայտնի էր դարձել, որ Թրամփ կրտսերը չեղարկել է նոյեմբերի 12-ին Հայաստան այցը, եւ չի բացառվում, որ այդ հարցազրույցն է դեր խաղացել. Եկեղեցու դեմ հետապնդումների մասին տեղեկությունները նրան հետ են պահել Հայաստան այցելելու մտքից: Փաշինյանը կարծում է, որ այդ հարցազրույցից հետո իր մասին բացասական տպավորություն է ստեղծվել ԱՄՆ-ում, ուստի Նազելի Բաղդասարյանին եւ Արարատ Միրզոյանին հանձնարարել է ռեւանշ-հարցազրույց կազմակերպել հայտնի Time ամսագրի հայտնի լրագրող Սայմոն Շուստերի հետ: Նա ուզում է միջազգային հանրությանը համոզել, որ ընդդիմության դեմ իր պայքարը լեգիտիմ է, եւ որոշել է ամերիկյան հարթակում փաստեր ներկայացնել, թե ինչպես էին ընդդիմությունն ու Եկեղեցու ներկայացուցիչներն այս ամռանը փորձում զավթել իշխանությունը՝ ուժի կիրառմամբ: Ավելին, նա հույս ունի հայտնվել ամերիկյան Time ամսագրի վարկածով «Տարվա մարդ» կոչման հավակնորդների ցուցակում: Կարծում է, որ դա կբարձրացնի իր վարկանիշը հայ հանրության աչքում: Նա ասել է՝ ֆինանսական ծախսերից չվախենան, կազմակերպեն հարցազրույցը: Սայմոն Շուստերն անցյալում հարցազրույցներ է արել Նավալնիի, Զելենսկու, անգամ Լուկաշենկոյի հետ:

ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռուսաստանի Դաշնության նախագահ Վլադիմիր Պուտինը հայտարարել է, որ Ռուսաստանը եւ Ղազախստանը առաջընթաց են գրանցում երկկողմ հարաբերությունների զարգացման գործում:

Կրեմլում Տոկաեւի հետ բանակցությունների ժամանակ Պուտինը նշել է, որ Ռուսաստանը ձգտում է զարգացնել հարաբերությունները Ղազախստանի հետ:

«Պետք է ասեմ, որ մենք լավ ենք գործում: Երբ ես «լավ» եմ ասում, նկատի ունեմ նաեւ միջտարածաշրջանային կապերը: Ռուսաստանի Դաշնության գրեթե տասը շրջաններ ակտիվորեն համագործակցում են Ղազախստանի գրեթե բոլոր շրջանների հետ», - ասել է Ռուսաստանի Դաշնության նախագահը:

ԱՐԹՈՒՐ ՉԱԽՈՅԱՆԸ ԱՀԱՋԱՆԳՈՒՄ Է

Ակտիվիստ Արթուր Չախոյանը ահազանգում է՝ իշխանություններն իրեն պատրաստվում են ազատազրկել, որ ինքը լռի, չբարձրաձայնի նրանց կոռուպցիոն գործարքների մասին:

«23 օր առաջ, Տիգրան Ավինյանի մտերիմների կողմից իրականացված կոռուպցիայի վերաբերյալ արված իմ բացահայտումից հետո, ինձ հասած տեղեկությունների համաձայն, իշխանությունը պատրաստվում է ինձ կալանավորել կամ իմ դեմ հարուցել ծանր, շինծու քրեական գործ, որպեսզի ես լռեմ:

Այդ հրահանգը պայմանավորված է գալիք 2026թ. ընտրություններով, քանի որ իմ փաստաթղթերով հիմնավորված եւ անհերքելի կոռուպցիոն բացահայտումները լուրջ հարված են հասցնում ՔՊ-ի վարկանիշին՝ ինչպես դա եղավ 2023թ. քաղաքապետի ընտրությունների ժամանակ, երբ Տիգրան Ավինյանի վարկանիշը կտրուկ անկում ապրեց:

Հիմա ասեմ, թե ինչն է իսկական ընդդիմադիրի եւ ՔՊ-ականի միջեւ առկա «արդարադատությունը». եթե օրը ցերեկով ՔՊ-ականի վրա հինգ հոգով հարձակվեն ու հեռախոսը գողանան, մի որոպե հետո բոլոր հարձակվողները կձերբակալվեն եւ երկու ամսվա կալանք կստանան: Բայց եթե նույնը տեղի ունենա ընդդիմադիրի հետ՝ ինչպես իմ դեպքում, ինչը տեղի ունեցավ 23 օր առաջ, իրավապահ համակարգը ձեւացնում է, թե ոչինչ չի պատահել: Գործը փորձում են ծածկադմփոց անել՝ կարծես ոչ ոք ինձ վրա չի հարձակվել, եւ ոչ էլ հեռախոս է գողացվել:

Պատճառը պարզ է՝ հարձակվողները Տիգրան Ավինյանի մտերիմներն են:

Սա է այսօրվա «արդարադատությունը» Հայաստանում, երբ ինձ՝ կոռուպցիա բացահայտողիս, փորձում են լռեցնել պետական ապարատի ճնշումների ներքո, շինծու մեղադրանքներով, միայն թե ՔՊ-ի վարկանիշը անկում չապրի»,- սոցցանցի իր էջում գրել է Չախոյանը:

ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ՝ ՎԱՀԵ ՀԱԿՈԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Աժ նախկին պատգամավոր, Սյունիքի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում, այս մասին լրատվամջոցներին հայտնել են դատախազությունից:

«Քրեական օրենսգրքի 277-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով եւ 296-ի 3-րդ կետով նախաձեռնված քրեական վարույթի շրջանակներում 31.10.2025 թվականին մեղադրյալ Վահե Հակոբյանի նկատմամբ հայտարարվել է հետախուզում», - տեղեկացրին դատախազությունից:

Նշենք, որ նա մեղադրվում է մասնավոր ոլորտում ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու եւ փողերի լվացման համար:

Հիշեցնենք, որ 2025 թվականի հունվարին ԱԱԾ-ն խուզարկություններ էր իրականացրել ՀՀ Աժ «Հայաստան» խմբակցության նախկին պատգամավոր, Սյունիքի մարզի նախկին մարզպետ Վահե Հակոբյանի եւ կնոջ՝ PARA TV լրատվամիջոցի ղեկավար Էլիզաբեթ Պետրոսյանի տանը:

Ինչպես հայտնում էին լրատվամիջոցները, առգրավվել էին հեռախոսներ:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ՝ ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻՆ

Այսօր Նիկոլ Փաշինյանը իր ճեպազրույցի ընթացքում լրագրողներին առաջարկել է հանդիպել՝ առանց տեսախցիկների:

«Շատ քննարկումներ ու քննադատություններ են հնչում, որ Հայաստանը կրճատում է իր պաշտպանության ծախսերը, բանակը զինաթափել է, եւ այս կամ այն հարցում սխալներ ենք գործում: Ուստի, ես լրագրողներին առաջարկում եմ՝ առանց տեսախցիկների, գրիչների եւ հեռախոսների, եթե պայմանավորվենք, որ ինֆորմացիան կպահպանվի կոնֆիդենցիալ, եւ եթե որեւէ մեկը պատրաստ է պահպանել կոնֆիդենցիալության կանոնները ու կազմել ցուցակ այն լրագրողների մասին, ովքեր պատրաստ են նման մասնակցությանը, ես պատրաստ եմ ձեզ տանել ու մոտիկից ծանոթացնել շնորհի, կատուների եւ մյուս բոլոր հնարավոր միջոցների հետ, որպեսզի անձամբ տեսնեք՝ արդյոք քննադատությունները հիմնավորված են, թե ոչ»:

Մանրամասն՝ «ԱրմԼուր.էյէմ» կայքում:

ԻՆՉՊԵՍ Է ԼՈՒԾՎԵԼՈՒ ԱՆԿԼԱՎ–ԷՔՍԿԼԱՎՆԵՐԻ ՀԱՐՑԸ

Հայաստան-Ադրբեջան պետական սահմանի առանձին հատվածների, ներառյալ անկլավների եւ էքսկլավների սահմանազատման աշխատանքներն իրականացվելու են «Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ կանոնակարգին համապատասխան: Այս մասին «Նյուզ.էյէմ» լրատվամիջոցի հարցմանն ի պատասխան հայտնել են ՀՀ փոխվարչապետ Մհեր Գրիգորյանի գրասենյակից:

«Նույն կանոնակարգով սահմանվում է նաեւ հանձնաժողովների կողմից կայացված որոշումների եւ/կամ պայմանավորվածությունների ուժի մեջ մտնելու ընթացակարգը: Որեւէ այլ ընթացակարգով Հանձնաժողովների կողմից որոշումներ չեն կայացվել եւ չեն կայացվելու:

Նշենք նաեւ, որ Հանձնաժողովների աշխատանքները պատշաճ լուսաբանվում են՝ Հայաստանի Հանրապետության եւ Ադրբեջանի Հանրապետության միջեւ պետական սահմանի սահմանազատման եւ սահմանային... սահմանված կարգով», - ասված է պատասխանում:

Նշենք, որ լրատվամիջոցը Մ. Գրիգորյանի գրասենյակին էր ուղղել հետեւյալ հարցերը. «Արդյոք Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանազատման հանձնաժողովները քննարկում ունեցել են անկլավների, էքսկլավների շուրջ: Կա՞ որոշում, թե ինչպես է լուծվելու այդ հարցը: Ո՞րն է Հայաստանի դիրքորոշումը, ինչպե՞ս պետք է հարցը լուծում ստանա, տարածքների փոխանակման տարբերակը դիտարկվո՞ւմ է:

Առհասարակ, ինչ փուլում են հանձնաժողովների աշխատանքները: Ո՞րն է լինելու հաջորդ սահմանազատվող հատվածը»:

ՆԱԽԸՆՏՐԱԿԱՆ ԽՈՍՏՈՒՄՆԵՐ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ՍԿՍԵԼ Է «ՍԻՐԱՇԱՀԵԼ» ԱՐՑԱԽՑԻՆԵՐԻՆ

«Արցախահայության շրջանում տարածված է այն համոզմունքը, որ 2026 թվականին, հատկապես մինչեւ ամառ՝ համապետական ընտրությունների նախաշեմին, Բաքվից տեղի կունենա գերիների վերադարձ»:

Նրանք համոզված են Նիկոլ Փաշինյանը սա եւս գործիք է դարձնելու՝ ընտրազանգված ապահովելու համար: Արցախցիները նաեւ համոզված են, որ եթե գերիների վերադարձ լինի, ապա նրանց թվում բացառվում է լինեն Արցախի ռազմաքաղաքական ղեկավարներից գոնե մեկը:

«Բռնի տեղահանված մեր հայրենակիցները համոզված են, որ Նիկոլ Փաշինյանի բոլոր կոչերը, որոնք ուղղված են «Ղարաբաղից մեր քույր ու եղբայրների Հայաստանում տնավորվելուն», պայմանավորված են ընտրական հանգամանքով: Փաշինյանն այս կերպ փորձում է «սիրաշահել» արցախահայությանը՝ ընտրություններին դեպի իր կողմ քաշելու նպատակով, քանի որ վեց ամիս, մեկ հասցեում մշտական գրանցում ունենալու դեպքում, արցախցիները եւս կկարողանան մասնակցել ընտրություններին»:

Սակայն հարկ ենք համարում նշել, որ արցախցիներն ունեն բավականին ընդգծված բացասական վերաբերմունք Նիկոլ Փաշինյանի եւ նրա թիմակիցների նկատմամբ:

Վերադառնալով Բաքվում պատանդառված մեր գերիներին՝ տեղեկացնենք, որ նոյեմբերի 12-ին Նիկոլ Փաշինյանը լրագրողների հետ զրույցում, անդրադառնալով Բաքվում գտնվող գերիների խնդրին, նշել է. «Ամենօրյա աշխատանք ենք անում գերիների հարցի ուղղությամբ, ես, կարծում եմ, որ եթե լինի խաղաղություն, մնացած բոլոր հարցերն էլ կլուծվեն», - ասել է Փաշինյանը:

Հիշեցնենք, որ Բաքուն պաշտոնապես հաստատել է 23 գերիների մասին, որոնցից 8-ը Արցախի ռազմաքաղաքական ղեկավարներն են, սակայն ոչ պաշտոնական տվյալներով՝ Բաքվում մեր գերիների թիվը հասնում է շուրջ 80-ի:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԱՐՄԵՆ ԹՈՐՈՍՅԱՆԸ՝ ՁԵՌՔԻ ՖԻՔՍԱՏՈՐՈՎ

Նոյեմբերի 11-ի երեկոյան տեղի է ունեցել «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության նիստ, որը վարել է Նիկոլ Փաշինյանը:

ArmLur.am լրատվականը նկատեց, որ վարչության անդամ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արսեն Թորոսյանը եղել է ձեռքի ֆիքսատորով:

Նախարարությունից մամուլի քարտուղար Նվեր Կոստանյանը մեզ փոխանցեց, որ «նախարար Արսեն Թորոսյանը չի կոտրել ձեռքը», ապա ավելացրեց՝ «անհոգ եղե՛ք»:

Նվեր Կոստանյանին մենք ուղարկեցինք լուսանկար, որտեղ ակնհայտ երեւում է նախարարի՝ ֆիքսատորով ձեռքը, սակայն Կոստանյանը պնդեց. «Չի կոտրել, ամեն դեպքում, բավարարվենք այսքանով:

Ն. ԱՂԱՍՅԱՆ

ՓԱՇԻՆՅԱՆԸ ԲԱՐԿԱՑԵԼ Է

Երեկ՝ նոյեմբերի 12-ին, ԱԺ-ում 2026 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկումն անակնկալ ընդմիջվեց 20 րոպեով, որովհետեւ դահլիճում չէր ԱԺ պաշտպանության եւ անվտանգության հարցերի հանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարյանը, որն այդ պահին պիտի զեկույցով հանդես գար: ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը միանգամից հայտարարեց ընդմիջում:

«Ենթադրում եմ, որ իմ պատճառով է եղել, որի համար ներողություն եմ խնդրում թե՛ կառավարությունից, թե՛ մեր գործընկերներից»,- հավելեց նա:

Քոչարյանը հայտարարեց, որ քարտուղարությունն ավելի ուշադիր պետք է լինի, որ եթե ելույթ ունեցողից հետո անմիջապես ինքը պետք է ելույթ ունենար՝ գոնե զգուշացնեին իրեն, որ դահլիճը չլքեր. «Այստեղ ես ընդունում եմ իմ մեղքը, բայց նաեւ նշում եմ, որ դուք թերացել եք»,- ասաց Քաչարյանը՝ շեշտելով, որ ԱԺ քարտուղարության պետ Թաթուլ Սողոմոնյանին է ուղղված իր խոսքը:

Նշենք, որ դահլիճում գտնվող վարչապետ Նիկոլ Փաշինյանը կոշտ արձագանքեց Անդրանիկ Քոչարյանի բացակայությանը: ԱԺ-ում Փաշինյանը բարկացավ թիմակիցների վրա, եւ միայն ուշացումով ներս մտավ Անդրանիկ Քոչարյանը: Փաշինյանը, ձեռքերը վեր պարզած, բարկացած, նախատեց Քոչարյանին:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԸ ՀԵՐՔԵԼ Է. ՌՈՒՍԱԿԱՆ ՀԱՑԱՀԱՏԻԿԻՑ ՉԵՆՔ ՀՐԱԺԱՐՎԵԼ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը արձագանքել է Ռուսաստանի արտաքին հետախուզության ծառայության (ԱՀԾ) տարածած հաղորդագրությանը, ըստ որի՝ Հայաստանը, իբր, ԵՄ միջոցների հաշվին պատրաստվում է հրաժարվել ռուսական հացահատիկից՝ հօգուտ ուկրաինականի:

«Չի կարող այդպիսի բան լինել: Բացարձակ անհեթեթություն է», - հայտարարել է Փաշինյանը՝ հերքելով տեղեկությունը:

Ավելի վաղ ՌԴ ԱՀԾ մամուլի ծառայությունը պնդել էր, թե Հայաստանը քաղաքական պատճառներով ցանկանում է «անջատվել» Մոսկվայից եւ «օգնություն ցուցաբերել» Կիեւին՝ գնելով ուկրաինական հացահատիկ՝ ավելի բարձր գներով: Ըստ նույն աղբյուրի՝ Երեւանը, իբր, մտադիր է գերավճարի տարբերությունը փոխհատուցել Եվրոպական միության միջոցներով:

ԿԱՍԵՑՎԵԼ Է ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՀ Շուկայի վերահսկողության տեսչական մարմինը իրականացրել է վերահսկողական գործողություններ՝ հեղուկացված ածխաջրածնային գազի վաճառքով զբաղվող «Կարեն Հայրապետյան Էդիկի» ԱՁ-ին պատկանող լցակայանում (Արարատի մարզ, գ. Դաշտավան, Մասիս - Էջմիածին խճուղի 21): Այս մասին հայտնում են Շուկայի վերահսկողության տեսչական մարմնից:

Ստուգումների արդյունքում հայտնաբերվել է վառելիքաբաշխիչ սարքավորման չափագիտական կանոնների եւ նորմերի պահանջների խախտում՝ թերլիցքավորում:

Հայտնաբերված խախտման հետեւանքով գազալցակայանի գործունեությունը կասեցվել է մինչեւ խախտման վերացումը:

Տնտեսվարող սուբյեկտը կենթարկվի վարչական պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

ՁԱՅՆԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՌ ԸՆԹԱՑՔԻ ՓՈՒԼՈՒՄ Է

ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆՆԵՐԸ ՀՐԱՎԻՐՎԵԼ ԵՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

Քննչական կոմիտեում հայ առաքելական եկեղեցու հոգեւորականների առնչությամբ նոր քրեական գործ է հարուցվել:

Իրավապահ համակարգից մեզ հայտնի էր դարձել, որ հոգեւորականներին հորդորել էին նոյեմբերի 12-ին՝ ժամը 10:00-ին, լինել քննչական կոմիտեում ու հարուցված նոր քրեական վարույթով կոնկրետ հարցերի պատասխանել:

Ինչ նոր մութ ամպեր են կուտակվել ու ինչ է սպասվում հոգեւորականներին.

ArmLur.am-ին հայտնի են դարձել, թե որ հոգեւորականներն են հարցաքննվել Քննչական կոմիտեում:

Մասնավորապես, Քննչական կոմիտե են հրավիրվել Հայր Շնորհքը, Տեր Մուշեն, Տեր Մկրտիչը, Տեր Զորայրը, Մուշեղ սրբազանը (Մայր Աթոռ), Հայր Ռուբենը (Մայր Աթոռ):

Նշենք, որ փաստաբան Արա Զոհրաբյանը հայտնել է, որ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եւ Արագածոտնի թեմից ավելի քան 8 հոգեւորական կանչվել են ՀՀ Քննչական կոմիտե:

Նրա խոսքով՝ նրանց ՔԿ են կանչել Նաթան սրբազանին առնչվող ձայնագրության վերաբերյալ քրեական վարույթի շրջանակում: «Նրանք վկայի կարգավիճակով են», - հայտնել է Զոհրաբյանը:

Փաստաբանը նշել է, որ Քննչական կոմիտե են կանչել ոչ միայն քահանաների, այլեւ բարձրաստիճան հոգեւորականների:

Հիշեցնենք՝ հոկտեմբերի 22-ին գրել էինք, որ ըստ մեր տեղեկությունների՝ Արքեպիսկոպոս Հովհաննիսյանին երեկոյան ժամը 18:00-ի սահմաններում ՀՀ քննչական կոմիտե են հրավիրել ու հարցաքննել: «Ժողովուրդ»-ին հայտնի դարձավ, որ կոմիտեում հարցաքննությունը կարճ է տեւել: Ավելին, երբ արքեպիսկոպոսին հարցրել են՝ ի՞նքն է խոսում նշյալ ձայնագրության մեջ, նա իր մտերիմ շրջապատում ասել է, որ անօրինական ձեռք բերված խոսակցության կապակցությամբ ասելիք չունի:

Հայտնել էինք, որ Քննչական կոմիտեն նոր գործընթաց է սկսելու Գարեգին Բ-ի վերաբերյալ: Հոկտեմբերի 17-ին համացանցում հայտնվել էր Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանի եւ Գարեգին Բ-ի նախկին գավազանակիր Աղան աբեղա Երնջակյանի՝ 2023 թվականի հոկտեմբերին տեղի ունեցած խոսակցության ձայնագրությունը: Ձայնագրության բովանդակությունը այն մասին է, թե իբր Գարեգին Բ-ն եկեղեցականներին ստիպել է մասնակցել հակաիշխանական ցույցերին, որի դեմ որոշ հոգեւորականներ ընդվզել են:

«Ժողովուրդ»-ը դիմեց Գլխավոր դատախազություն. ի պատասխան մեր հարցման՝ տեղեկացանք, որ համացանցում տարածվող ձայնագրությունը վարույթի շրջանակում քննության առարկա կդառնա:

Իսկ ինչ վարույթի մասին է խոսքը.

Մեր տեղեկություններով՝ ՀՀ քննչական կոմիտեի Երեւանի քաղաքի քննչական վարչության ծանր հանցագործությունների քննության բաժնում հավաքներին մասնակցելուն հարկադրելու, ընտրական իրավունքի իրականացմանը խոչընդոտելու եւ խոշոր չափերով վստահված գույքի հափշտակության դեպքերի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ, որի շրջանակում կալանավորվել են Արագածոտնի թեմի առաջնորդը՝արքեպիսկոպոս Պռոշյանը, որը Գարեգին Բ-ի քրոջ որդին է, Տեր Գարեգինը եւ առաջնորդարանի հաշվապահը:

Համացանցում առկա ձայնագրությունը ուղարկվել է ՀՀ քննչական կոմիտե, որպեսզի վերոնշյալ վարույթի շրջանակում քննություն իրականացվի: Այդ գործի առնչությամբ էլ հարցաքննվել է Նաթան արքեպիսկոպոս Հովհաննիսյանը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՆՈՐԱՎԱՆԻ ԴՊՐՈՑԻ ՏՆՕՐԵՆԸ ՄԵՂԱԴՐՎՈՒՄ Է ՎԱՏՆՄԱՆ ՀԱՄԱՐ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում նախաձեռնված քրեական վարույթով իրականացված նախաքննությամբ հիմնավորվել է, որ «Նորավանի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնը զբաղեցրած անձը 2021-2024 թվականների ընթացքում, օգտագործելով իր ծառայողական լիազորությունները, վատնման եղանակով հափշտակել է իրեն վստահված խոշոր չափերի գումարը, ինչպես նաեւ կատարել պաշտոնեական կեղծիք:

Մասնավորապես՝ պարզվել է, որ վերը նշված ժամանակահատվածում դպրոցի տնօրենը համապատասխան հաստիքներին հրամանագրել է իր ծանոթ անձանց, ովքեր ընդհանրապես չեն հաճախել աշխատանքի եւ չեն կատարել իրենց պարտականությունները, սակայն դպրոցի տնտեսվարի կողմից կազմված եւ տնօրենի կողմից հաստատված աշխատաժամանակի հաշվարկի կեղծ տեղեկագրերի հիման վրա՝ նշված անձանց որպես աշխատավարձ փոխանցվել է ընդհանուր շուրջ 2,7 միլիոն ՀՀ դրամ գումար, որը վատնման եղանակով հափշտակվել է տնօրենի կողմից:

Վատնման եղանակով հափշտակություն եւ պաշտոնեական կեղծիք կատարելու համար դպրոցի տնօրենին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 256-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ եւ 3-րդ կետերով (3 դրվագ) եւ 445-րդ հոդվածի 1-ին մասով (3 դրվագ): Նրա նկատմամբ որպես համակցված խափանման միջոցներ են ընտրվել վարչական հսկողությունն ու պաշտոնավարման կասեցումը: Մեղադրանքներ են ներկայացվել նաեւ տնօրենին օժանդակած՝ դպրոցի երեք աշխատակիցներին, այդ թվում՝ տնտեսվարին, ում նկատմամբ որպես համակցված խափանման միջոցներ են ընտրվել պաշտոնավարման կասեցումն ու ՀՀ-ից բացակայելու արգելքը:

Պատճառված 2,7 մլն ՀՀ դրամի վնասը նախաքննության ընթացքում ամբողջությամբ վերականգնվել է:

Քրեական վարույթով նախաքննությունն ավարտվել է: Վարույթի նյութերը մեղադրական եզրակացությամբ հանձնվել են հսկող դատախազին՝ այն հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԹՄՐԱՄԻՋՈՑ ԵՆ ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ

Քրեական ոստիկանության Շիրակի մարզային վարչության ծառայողները, իրացնելով օպերատիվ տեղեկությունները, նոյեմբերի 10-ին Գյումրի քաղաքի Տիգրան Մեծի փողոցում հայտնաբերել, ապօրինի թմրամիջոց ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու կասկածանքով ձերբակալել եւ վարչություն են տեղափոխել 39-ամյա մի տղամարդու:

Նրա անձնական խուզարկությամբ հայտնաբերվել են 9,04 գրամ թմրանյութին նմանվող զանգված եւ դեղնականաչավուն զանգվածով կաթուցիչ:

Գյումրու բնակիչ 39-ամյա տղամարդը եւ կազմված փաստաթղթերը ներկայացվել են Շիրակի մարզային քննչական վարչություն:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ԱՆԱԿՑԻԶ ՕՂԻ ՈՒ ԾԽԱԽՈՏ

Համայնքային ոստիկանության Ճամբարակի բաժնի ծառայողները, օպերատիվ տեղեկությունն իրացնելիս, նոյեմբերի 10-ին՝ ժամը 14:00-ի սահմաններում, Ճամբարակ քաղաքի սկզբնամասում ստուգման նպատակով կանգնեցրել են «Օպել Աստրա» մակնիշի ավտոմեքենա, որի սրահում եւ բեռնախցիկում կար մեծ քանակի օղի եւ ծխախոտ:

Ավտոմեքենան տեղափոխվել է բաժնի պահպանվող հատուկ տարածք: Աբովյան քաղաքի բնակիչ 35-ամյա վարորդը մեքենայի սրահից եւ բեռնախցիկից ներկայացրել է տարբեր տեսակի եւ տարողության 460 շիշ օղի, տարատեսակ 1440 ծխախոտ եւ 42 տուփ ճայթռուկներ, բոլորն էլ առանց ակցիզային դրոշմանիշի եւ փաստաթղթերի:

Ապրանքները փաթեթավորվել եւ կնիքվել են՝ հետագա ստուգման համար:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Սեւանի քննչական բաժին: Հանգամանքները պարզվում են:

ՕՊԵՐԱՏԻՎ ԻՐԱՎԻՃԱԿ

Նոյեմբերի 11-12-ը հանրապետությունում բացահայտվել է 117 հանցագործություն, որոնցից 4-ը՝ նախկինում կատարված:

Մասնավորապես՝

- 44 դեպք՝ տրանսպորտային միջոց վարելու իրավունքից զրկված կամ այդ իրավունքը կասեցված կամ այդ իրավունքը չունեցող անձի կողմից տրանսպորտային միջոց վարելու,
-15 դեպք՝ թմրանյութի հայտնաբերման,
-7 դեպք՝ մարմնական վնասվածք պատճառելու,
- 6-ական դեպք՝ ֆիզիկական ներգործության, անձնական ունեցվածքի գողության, փաստաթուղթ կեղծելու,
-3-ական դեպք՝ բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու, աշխատանքի պաշտպանության կանոնները խախտելու,
-2-ական դեպք՝ խարդախության, գույքը ոչնչացնելու կամ վնասելու, ծառերը, թփերը ապօրինի հատելու:

Բացահայտվել է նաեւ հոգեկան ներգործության, ավազակության, բնակարանային գողության, շորթման, խուլիգանության, կաշառակերության, զենք-զինամթերքի առգրավման, թմրամիջոցի մաքսանենգության, ինքնիրավչության, ընդերքի պահպանման կամ օգտագործման պահանջները խախտելու եւ այլ դեպքեր:

Նախկինում կատարված հանցագործություններից բացահայտվել է՝

-2-ական դեպք՝ անձնական ունեցվածքի գողության,
-1-ական դեպք՝ խուլիգանության, բնակարանային գողության:

Հայտնաբերվել է 6 հետախուզվող, կամավոր ներկայացել է 2-ը:

Գրանցվել է զենք-զինամթերք կամավոր հանձնելու 3 դեպք:

ՃՏՊ վիճակագրություն

Անցած 1 օրում գրանցվել է 19 ավտովթար. 1 մարդ զոհվել է, 28-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 11-ից 12-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 117 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԲՆԱԿԻՉՆԵՐԸ ՉԵՆ ՎՃԱՐԵԼ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԸ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին տեղեկատվական հարցում ենք ուղարկել՝ պարզելու մարզի համայնքների սեփական եկամուտների կատարողականի ցուցանիշները: Մարզպետի աշխատակազմից հայտնել են.

«Սեպտեմբերի 20-ի դրությամբ մարզի համայնքների սեփական եկամուտների կատարման ցուցանիշները կազմել են՝ Իջեւան՝ 77.6 %, Դիլիջան՝ 98.3 %, Բերդ՝ 87.0 %, Նոյեմբերյան՝ 83.2 %»:

Իջեւանի համայնքապետարանում ձեռնարկվել են քայլեր՝ սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը բարձրացնելու եւ գույքահարկի ժամկետանց պարտքեր ունեցող բնակիչների նկատմամբ անհրաժեշտ միջոցներ կիրառելու նպատակով:

Նոյեմբերի 11-ին Իջեւանի համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը որոշումներ է ընդունել համայնքի վեց բնակիչների նկատմամբ՝ գույքահարկի գանձման պահանջ ներկայացնելու մասին: Համայնքապետարանում կազմվել են վարչական ակտեր:

Նվեր Մանուկյանին պատկանող ավտոմեքենայի գույքահարկը կազմում է 543 501 դրամ, որը չի վճարվել 2019-2025 թվականներին: Գումարի մի մասը համարվում է ապառք, մյուսը՝ տույժ: Նոյեմբերի 11-ին Իջեւանի համայնքապետարանում անցկացվել են վարչական վարույթի լսումներ, որոնց մասնակցելու համար Ն. Մանուկյանը պատշաճ ծանուցվել էր, սակայն չի ներկայացել: Համայնքի ղեկավար Ա. Ճաղարյանը որոշել է Ն. Մանուկյանից Իջեւան համայնքի բյուջեի օգտին գանձել 543 501 դրամ՝ որպես ավտոմոբիլային փոխադրամիջոցի գույքահարկ:

Նույն օրը Ա. Ճաղարյանը գույքահարկի գանձման պահանջ է ներկայացրել նաեւ՝

- Ալեքսանդր Բաշկիրովին՝ 980 339 դրամի չափով,
- Միեր Գուլակյանին՝ 823 831 դրամի չափով,
- Ֆրունզիկ Ադամյանին՝ 419 017 դրամի չափով,
- Ռոմա Հովհաննեսյանին՝ 362 523 դրամի չափով,
- Սամվել Դավթյանին՝ 309 397 դրամի չափով:

Համայնքի ղեկավարի այս որոշումները կարող են վարչական կարգով բողոքարկվել Իջեւանի համայնքապետին՝ դրանց ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում, կամ դատական կարգով՝ ՀՀ վարչական դատարան ներկայացված բողոքով՝ նույն երկամսյա ժամկետում:

Որոշման պահանջները չկատարելու դեպքում այն ենթակա է հարկադիր կատարման՝ ԴԱՀԿ ծառայության միջոցով, «Վարչարարության հիմունքների եւ վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 88-րդ հոդվածով սահմանված կարգով՝ անբողոքարկելի դառնալուց հետո եռամսյա ժամկետում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԱԼԱՆՔԻ ԺԱՄԿԵՏԻ ԵՐԿԱՐԱՁԳՄԱՆ ՀԱՐՑԸ՝ԿՐԿԻՆ ԻՐԱՎԱՊԱՀՆԵՐԻ ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

ԻՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ

Ինչպես «Ժողովուրդ» օրաթերթը հայտնել էր, այսօր ՀՀ Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Կարեն Ամիրյանը պետք է քննի Սամվել Կարապետյանի պաշտպանների բողոքը կալանքի դեմ:

Ո՞վ է դատավոր Կարեն Ամիրյանը եւ ի՞նչ գործեր է նա քննել

Դատավոր Կարեն Ամիրյանին է մակագրվել ՊԵԿ նախկին նախագահ Վարդան Հարությունյանի կալանավորման որոշման դեմ բողոքը. վերջինս շարունակում է մնալ կալանքի տակ: Դատավոր Ամիրյանը նաեւ քննել է Քաղաքաշինության կոմիտեի նախկին նախագահ Վահագն Վերմիշյանի գործը:

ՀՀ վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Կարեն Ամիրյանը մերժել էր նաեւ դատախազի բողոքը եւ անփոփոխ էր թողել դատավոր Արտուշ Գաբրիելյանի նկատմամբ կիրառված տնային կալանքը:

Սակայն սա դեռ ամենը չէ: 2024 թվականի դեկտեմբերին փաստաբան Արա Ջոհրաբյանն ու մի խումբ այլ փաստաբաններ դիմել էին դատախազություն՝ պահանջելով քրեական վարույթ սկսել Ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանի՝ կոռուպցիոն բնույթի հնարավոր արարքների վերաբերյալ: Դատախազությունն ու Հակակոռուպցիոն կոմիտեն մերժել էին դիմումը, իսկ 2025 թվականի փետրվարին դատարանը մերժել էր նաեւ բողոքը:

Վերջապես, 2025 թվականի ապրիլի 3-ին Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի դատավոր Կարեն Ամիրյանը բեկանել էր Հակակոռուպցիոն դատարանի՝ Վահե Հովհաննիսյանի դեմ քրեական վարույթը մերժելու որոշումը եւ պարտավորեցրել էր վարույթ սկսել:

Սամվել Կարապետյանի կալանքի երկարաձգման հարցը

Հոկտեմբերի 18-ին լրացել էր բարերար Սամվել Կարապետյանի կալանքի ժամկետը, սակայն նրա կալանքը կրկին երկարաձգվել է՝արդեն երրորդ անգամ: Կարապետյանի պաշտպանը նշել էր, որ գործարարին առաջադրված մեղադրանքների փունջը՝ փողերի լվացումը, հարկեր ու տուրքեր չվճարելը եւ դրանց կազմակերպումը, դատական նիստերի ընթացքում «չէր հաղթահարել» հիմնավոր կասկածի շեմը:

«Դատարանը, սակայն, միայն մեկ դրվագում գտել էր հիմնավոր կասկած՝ Կարապետյանի արտահայտած կոչի վերաբերյալ», - ասել էր պաշտպանը՝ Արամ Վարդեւանյանը:

Արձագանքը վերաբերում է գործարարի այն հայտարարությանը, որը քննության նյութերում ձեւակերպվել է որպես «Մեր ձեւով գործընթացին մասնակցելու կոչ»: Այն կապ ունի Հայ առաքելական եկեղեցու նկատմամբ տեղի ունեցող բռնաճնշումների գործընթացների հետ: Դատավոր Տիգրան Դավթյանը «փողերի լվացման» եւ «թալանի» թեմաները «մաքրել» է Սամվել Կարապետյանի վրայից՝ թողնելով միայն նրա արտահայտած կարծիքն ու «Մեր ձեւով»-ը իր համատեքստում:

Միայն կարծիքի համար՝ կալանք

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ քննություն, որպես այդպիսին, փաստորեն չի տարվում: Բարերարը ամիսներ շարունակ գտնվում է բանտում՝ բացառապես իր արտահայտած կարծիքի պատճառով:

Նոյեմբերի 18-ին լրանում է Սամվել Կարապետյանի կալանքի ժամկետի սահմանված օրը: «Ժողովուրդ» օրաթերթին հայտնի էր դարձել, որ նախաքննական մարմինը ներքին հրահանգ է տվել՝ սահմանված ժամկետի լրանալուց օրեր առաջ միջնորդություն ներկայացնել դատարան՝ խափանման միջոցը երկարաձգելու վերաբերյալ: Ասել է թե՝ նախաքննական մարմինը ներկայում պատրաստվում է Սամվել Կարապետյանի կալանքը երկարաձգելու մասով դիմել դատարան:

Իսկ թե ինչ է սպասվում Սամվել Կարապետյանին այսօր, ցույց կտա ժամանակը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՆԴՐԱԴԱՐՁ

«ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՍԱԾԸ ՄԱՐԴԿԱՆՑ ԱՆՏՈՒՆ ԹՈՂՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ Է», ԹԱԹՈՅԱՆ

«Փաշինյանի՝ Արծվաշենը վերադարձնելու խոսքս հայտարարությունն իրականում բազմաթիվ մարդկանց անտուն թողնելու մասին է»:

Այս մասին Facebook-ի իր էջի ուղիղ եթերում նշել է «Միասնության թեւեր» քաղաքական նախաձեռնության ղեկավար Արման Թաթոյանը:

Նա, մասնավորապես, նշել է. «Փաշինյանը դրա փորձն արդեն ձեռք է բերել Արցախի օրինակով ու հմտացել է. գիտի, որ արդեն նման դեպքերում պետք է խոսի ոչ թե հանձնելու, այլ վերադարձնելու մասին:

Խոսում եմ անկլավների մասին: Ես հիմա ձեզ կոնկրետ օրինակով, ապացույցով կներկայացնեմ, թե ինչ է սպառնում Հայաստանին, եթե տեղի ունենա անկլավների, տարածքների փոխանակման այս արհեստական ծրագիրը: 2020 թվականից հետո Ադրբեջանը ինտենսիվացրեց Տիգրանաշենի, Արծվաշենի, Տավուշում ինչոր անկլավային գյուղերի, տարածքների փոխանակման, վերահսկողության հանձնման ծրագիրը: Դրանից հետո Փաշինյանը, ՔՊ-ականները, իրար հերթ չտալով անընդհատ խոսում էին սրա մասին, բայց իրականում սա ամբողջ Հայաստանը շրջափակման մեջ գցելու, մեր սահմանները ավերելու, բզկտելու ծրագիր է: Ռազմավարական անվտանգության առումով անդառնալի խնդիրներ են առաջ գալու»:

Թաթոյանը ցույց տվեց քարտեզ Տավուշի մարզից՝նշելով, որ Ազատամուտից 20-30 մետր հեռավորության վրա ադրբեջանական վերահսկողություն է լինելու. «Եթե նրանց (ադրբեջանական - խմբ.) զինված ուժերը բերեն տեղակայեն այդտեղ, ու ես համոզված եմ, որ բերելու են, Կայան բնակավայրը հայտնվում է գրեթե վերացման եզրին: Ադրբեջանական վերահսկողության ներքո է հայտնվում դեպի Այգեհովիտ տանող գյուղը, հետո դեպի Վազաշեն տանողը: Ստիպված ճանապարհները նորից կառուցելու են անտառների միջով, երկրի խորքով՝ բազմաթիվ բարդություններ պատճառելով մարդկանց:

Մեր արոտավայրերը, մեր խոտհարքները, հողերը հայտնվելու են նրանց վերահսկողության ներքո: Այստեղ կան նաեւ ինտերնետ մալուխներ, կան ջրի աղբյուրներ, միջպետական ճանապարհներ, որոնք հայտնվելու են նրանց վերահսկողության ներքո:

Ես սա հենց այնպես չեմ ասում. այս բոլոր վայրերում մեր մասնագետների հետ ինքս եղել եմ, քայլել ենք, ոտքով չափչփել ենք ամեն սար, ձոր, ծառ ու թուփ եւ արձանագրել ենք սրանք տեղում լինելով:

«Փաշինյանը հայտարարում է, որ սահմանազատման միջոցով է հնարավոր վերադարձնել տարածքները: Սակայն սա կատարյալ աբսուրդ է, քանի որ նման սահմանազատումը չի կարող լինել լեգիտիմ միջազգային մակարդակով, եթե դրա արդյունքում խաթարվում է երկրի անվտանգության համակարգը եւ եթե մարդկանց կյանքը դառնում է ուղղակի անհնար: Այսպիսով, սա ՔՊ-ի եւ Փաշինյանի քաղաքական որոշումն է, որը միջազգային որեւէ չափանիշով անթույլատրելի է»:

Ես կարծում եմ՝ ասուլիսի միջոցով նաեւ բացառիկ փաստերով ցույց կտանք, թե ինչպես է հնարավոր այս հարցը լուծել եւ սրա դեմն առնել, կանխել», - իր խոսքում ընդգծել է Արման Թաթոյանը:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 19 պատահար, 1 մարդ մահացել է, 28-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԻՆՉ Է ԿԱՏԱՐՎՈՒՄ

ՉԵՂՅԱԼ ԵՆ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ ԱՊՀ ՄԻ ՇԱՐՔ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐ

Մոլդովայի կառավարությունը չեղյալ է հայտարարել ԱՊՀ շրջանակներում մի շարք համաձայնագրեր, որոնք վերաբերում են անայցագիր ռեժիմին, բնապահպանությանը, հարկմանը եւ այլ ոլորտների:

Այս մասին, «Արմենպրես» լրատվամիջոցի փոխանցմամբ հաղորդել է ՏԱՍՍ-ի թղթակիցը:

«Այդ համաձայնագրերը չեն գործում եւ չեղյալ են հայտարարվել ԱՊՀ շատ երկրների կողմից: Ինչ վերաբերում է անայցագիր ռեժիմի մասին պայմանագրին, ապա այն փոխարինում են այդ երկրների հետ ավելի վաղ կնքված երկկողմ համաձայնագրերով», - պարզաբանել է Մոլդովայի արտաքին գործերի նախարար Միհայ Պոպշոյը:

Խոսքը վերաբերում է 1992 թ. հոկտեմբերի 9-ին Բիշքեկում ստորագրված համաձայնագրին, որը նախատեսում է ԱՊՀ անդամ պետությունների քաղաքացիների համար առանց այցագրի տեղաշարժ նրանց տարածքներում, զինվորական փոխադրումների սկզբունքների եւ կարգի մասին համաձայնագրին (Տաշքենդ, 1992 թ. մայիսի 15), քիմիայի եւ նավթաքիմիայի բնագավառում համագործակցության մասին համաձայնագրին (Մոսկվա, 1994 թ. սեպտեմբերի 9), ավտոտրանսպորտային միջոցների համար որպես շարժիչային վառելիք սեղմված բնական գազի օգտագործման բնագավառում համագործակցության մասին համաձայնագրին (Մինսկ, 1995 թ. մայիսի 26) եւ բնապահպանության եւ շրջակա միջավայրի պահպանության բնագավառում փոխգործակցության մասին համաձայնագրին (Մոսկվա, 1992 թ. փետրվարի 8): Այդ որոշումներն ուժի մեջ կմտնեն «Պաշտոնական տեղեկագրում» հրապարակվելուց հետո:

Բացի դրանից, կառավարությունը հավանություն է տվել է 1998 թ. նոյեմբերի 25-ին Մոսկվայում ստորագրված «Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) արտահանման եւ ներմուծման անուղղակի հարկերի գանձման սկզբունքների մասին» համաձայնագիրը եւ «ԱՊՀ անդամ երկրների տնտեսական կազմակերպությունների միջեւ հաշվարկների բարելավումն ապահովող միջոցների մասին» համաձայնագիրը (Տաշքենդ, 1992 թ. մայիսի 15) չեղյալ հայտարարելու մասին օրինագծերին:

2023 թ. փետրվարին Մոլդովայի կառավարությունը հայտարարել է ԱՊՀ շրջանակներում կնքված 282 համաձայնագրերից ավելի քան 119-ը չեղյալ հայտարարելու պլանների մասին: Ավելի վաղ կառավարությունն ավարտել է հիսունից ավելի համաձայնագրերից դուրս գալու ընթացակարգերը: Ինչպես պարզաբանել է Մոլդովայի արտաքին գործերի նախարարը, Քիշնեւը մտադիր չէ չեղյալ հայտարարել ԱՊՀ շրջանակներում երկրի համար կարեւոր եւ օգտակար համաձայնագրերը:

«ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» Գ

ԲԱՆԿԸ ՆԵՐԳՐԱՎԵԼ Է 30 ՄԼՆ ԴՈԼԱՐ՝ ՄՓՄՁ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

2025 թվականի հոկտեմբերի 21-ին «Հայէկոնոմբանկը» եւ KfW Group-ի դուստր ձեռնարկություն՝ գերմանական զարգացման ֆինանսավորման DEG – Deutsche Investitions- und Entwicklungsgesellschaft mbH ընկերությունը, ստորագրել են 30 միլիոն ԱՄՆ դոլարի վարկային պայմանագիր, որից ստացված միջոցները կուղղվեն Հայաստանում միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների վարկավորմանը եւ զարգացմանը:

Այս պայմանագիրը «Հայէկոնոմբանկի» եւ DEG-ի միջեւ երկրորդ գործարքն է: «Հայէկոնոմբանկը» KfW-ի հետ գործընկերային հարաբերություններ է պահպանել ավելի քան 25 տարի՝ համագործակցելով Հայաստանում իրականացվող տարբեր զարգացման ծրագրերի շուրջ:

Նշենք, որ «Հայէկոնոմբանկը» 2025 թվականին վարկային պայմանագրեր եւ գործարքներ է կնքել միջազգային վարկային կազմակերպությունների հետ՝ միկրո, փոքր եւ միջին ձեռնարկությունների վարկավորման եւ առեւտրի ֆինանսավորման նպատակով՝ մոտավորապես 87 միլիոն ԱՄՆ դոլարին համարժեք գումարով:

«Հայէկոնոմբանկը» վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ՊԱՏՐԱՍՏ ԼԻՆԵԼ ՌԻՍԿԵՐԻՆ. ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՀ պետական բյուջեն պետք է ճկուն լինի: Այս մասին նոյեմբերի 12-ին Ազգային ժողովի նիստում՝ 2026 թվականի պետական բյուջեի նախագծի քննարկման ժամանակ, հայտարարել է ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

Նախարարի խոսքով՝ այն պետք է կարողանա արագ արձագանքել արագ փոփոխվող աշխարհին: «Սա մեր կառավարության համախմբված հնգամյա բյուջեն է: Այն լի է մարտահրավերներով եւ հնգամյա ճանապարհորդության տրամաբանական ավարտով», - ասել է Հովհաննիսյանը:

Կառավարության ներկայացուցիչը նաեւ անդրադարձել է տնտեսության վրա արհեստական բանականության ազդեցությանը: «Այսօր այն արդեն փոխում է աշխարհի բնույթը եւ նույնիսկ տնտեսությունների կառուցվածքը... Նույնիսկ բարենպաստ ժամանակներում մենք պետք է պատրաստ լինենք հնարավոր ռիսկերին՝ պահպանելով հարկաբյուջետային կայունությունը, կրճատելով դեֆիցիտը եւ զարգացնելով տնտեսության ներուժը առաջադեմ տեմպերով», - հավելել է նախարարը:

«ՖՈՒՆԳ–ՎՈՆԳ» ԹԱՅՖՈՒՆԸ ՄՈՏԵՆՈՒՄ Է ՕԿԻՆԱՎԱ ԿՂԶՈՒՆ

Ֆիլիպիններում առնվազն 900,000 մարդ է տարհանվել «Ֆունգ Վոնգ» գերթայֆունի պատճառով, որը մոլեգնում է 185 կմ/ժ (115 մղոն/ժ) արագությամբ եւ մինչեւ 230 կմ/ժ (144 մղոն/ժ) արագությամբ քամու ուժգնությամբ: Փոթորիկը տանում է մարդկանց, կախովի կամուրջներ, ծառեր եւ ոչնչացնում տներ:

Իսկ այժմ փոխել է շարժման ուղղությունը եւ մոտենում է Ճապոնիայի Օկինավա հարավային կղզուն: Այդ մասին տեղեկանում ենք «ՌԻԱ Նովոստի» գործակալությունից:

Գլխավոր օդերեւութաբանական գործակալության տվյալների համաձայն՝ ներկայում ճնշումը թայֆունի կենտրոնում կազմում է 994 հեկտոպասկալ, քամու ուժգնությունը կազմում է վայրկյանում 23 մետր, իսկ պոռթկումների ժամանակ՝ վայրկյանում մինչեւ 35 մետր:

Սպասվում է, որ ցիկլոնը Օկինավա կղզու հարավային ափին կմոտենա, այնուհետեւ կանցնի կղզու արեւելյան ափի երկայնքով՝ իր հետ բերելով հորդառատ անձրեւներ ու փոթորկային քամիներ:

Մասնագետները բնակիչներին կոչ են անում ծով դուրս չգալ, ինչպես նաեւ զգոնություն պահպանել անբարենպաստ եղանակի պատճառով:

«Ֆունգ-վոնգ»-ը, որը դասակարգվել է որպես սուպերթայֆուն, նոյեմբերի 9-ին մոլեգնել է Ֆիլիպինների հյուսիսարեւելյան մասում: Վերջին տվյալների համաձայն՝ երկրում զոհվել է առնվազն 25 մարդ, ավելի քան 2,4 միլիոն մարդ տարհանվել է:

Այս շաբաթ ավելի վաղ ցիկլոնը մոլեգնել է Թայվանի հյուսիս-արեւելքում, որտեղ ջրածածկ են եղել մի քանի գյուղեր:

ԼԵՀԱՍՏԱՆԸ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻՆ

Լեհաստանը հրաժարվում է իր երկրում ընդունել եւ վերաբնակեցնել միգրանտներին՝ Եվրամիության միգրացիոն պայմանագրի համաձայն: «Արմենպրես» լրատվամիջոցի փոխանցմամբ՝ այս մասին հայտարարել է վարչապետ Դոնալդ Տուսկը:

«Լեհաստանը չի ընդունելու միգրանտներին միգրացիոն պայմանագրի համաձայն: Եվ չի վճարելու դրա համար: Սա վերջնականապես որոշված է: Մենք գործում ենք, ոչ թե խոսում», - գրել է Տուսկը X սոցիալական հարթակում:

Ավելի վաղ Լեհաստանի նախագահ Կարոլ Նավրոցկին եւ արտգործնախարար Մարցին Կերվինսկին հայտարարել էին Լեհաստանում ԵՄ-ի միգրացիոն պայմանագրի իրագործմանը հակազդելու մտադրության մասին:

Այս շաբաթ լեհական լրատվամիջոցները հաղորդել են, որ Լեհաստանը, ինչպես նաեւ Ավստրիան, Բուլղարիան, Չեխիան, Խորվաթիան եւ Էստոնիան հայտեր են պատրաստում հաջորդ տարի միգրանտների վերաբնակեցումից լրիվ կամ մասնակի ազատվելու համար, ինչը նախատեսված է ԵՄ-ի ապաստան տրամադրելու եւ միգրացիայի մասին պայմանագրով:

Լեհ-բելառուսական սահմանին դադարեցվել է միջազգային պաշտպանության համար օտարերկրացիներից դիմումների ընդունումը: Լեհաստանի կառավարության համապատասխան որոշումը, որի գործողության ժամկետը 60 օր է, ուժի մեջ է մտել 2025 թ. մարտի 27-ին եւ հետագայում երկարացվել Սեյմի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ՀԱՎԵՐԺԱԿԱՆ ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ՄԵԾ ՎԱՐՊԵՏԻՆ

ԱՎ. ԻՍԱՀԱԿՅԱՆԻ 150 ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՆԱՄԱԿԱՆԻՇ

Ավետիք Իսահակյանի ծննդյան 150-ամյակին նվիրված միջոցառումների շրջանակում նոյեմբերի 11-ին Գրողի տուն-թանգարանում տեղի ունեցավ նրա անունը կրող նամականիշի մարումը «Հայփոստ»-ի կողմից: Նամականիշն ընդգրկվել է «Մեծանուն հայեր» շարքում, եւ այն շրջանառության մեջ դրվեց Իսահակյանին նվիրված հուշադրամի հետ միասին: Այս միջոցառումը դարձավ նոր հնարավորություն՝ վաստակավոր գրողի ստեղծագործությունների ու կյանքը ներկայացնելու եւ նրա ազդեցությունն արդի հասարակությանը հիշեցնելու համար:

Նամականիշի մարումն իրականացրին Ավետիք Իսահակյանի թոռը՝ գրող եւ գրականագետ Ավիկ Իսահակյանը, «Հայփոստ»-ի գլխավոր գործադիր տնօրեն Շուշան Ալեքսանյանը, «Հայփոստ»-ի խորհրդի անդամ Վիկտորիա Պողոսյանը, ՀՀ ԲՏԱ նախարարի առաջին տեղակալ Գեւորգ Մանթաշյանը, ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ալֆրեդ Քոչարյանը, Ֆիլատելիստների հայկական ասոցիացիայի նախագահ Հովիկ Մուսայելյանը:

Շուշան Ալեքսանյանի խոսքերով՝ Ավետիք Իսահակյանի նամականիշը՝ որպես մշակութային արժեք, բոլորիս համար մեծապես սպասված էր: «Նրա գրականությունը դուրս է սերունդների եւ ժամանակի սահմաններից: Այս նամականիշը ոչ միայն հարգանքի տուրք է մեծ վարպետին, այլ նաեւ հնարավորություն՝ աշխարհին ցույց տալու, թե ովքեր ենք մենք, ինչ արժեքներ ենք կերտել եւ ինչով ենք հպարտ»,- ասել է նա:

Ավիկ Իսահակյանն ուրախալի համարեց մեծ վարպետի պատկերը հայկական դրոշմանիշի վրա կրկին տեսնելը: «Հայկական դրոշմանիշները հետաքրքիր պատմություն ունեն: Նամականիշներից շատերի վրա պատվավոր տեղ են զբաղեցրել մեր մշակույթի, գրականության գործիչները: Իսահակյանի նամականիշը կարող է նոր էջ բացել հայ ֆիլատելիայի պատմության մեջ, քանի որ նամականիշի միջոցով անգամ ամենափոքր ժողովուրդը կարող է հասնել աշխարհի ամենահեռավոր ծայրերը: Այն դառնում է յուրօրինակ դեսպան: Մեծարելով մեր մեծերին՝ մեր անցյալն ենք մեծարում եւ հարգում»,- ընդգծել է նա:

Ֆիլատելիստների միության նախագահ Հովիկ Մուսայելյանը հիշեցրել է, որ Իսահակյանի 125-ամյակի կապակցությամբ նաեւ թողարկվել էր նամականիշ, իսկ խորհրդային տարիներին էլ նմանատիպ նամականիշ էր թողարկվել՝նվիրված գրողի 100-ամյակին: Նա հավելել է, որ «Հայփոստ»-ը միայն չորս հայ մեծերից է մի քանի անգամ նամականիշներ թողարկել՝ Հովհաննես Թումանյան, Արամ Խաչատրյան, Մարտիրոս Սարյան եւ Ավետիք Իսահակյան: «Մինչ մեր հարեւան պետությունը զբաղված է ֆիլատելիայի միջոցով պատմությունը կեղծելու գործով՝ ներկայացնելով տարբեր քարտեզներ, մենք շարունակում ենք մեր ֆիլատելիայով ներկայացնել մեր մեծերին, մեր ինքնությունը եւ պատմական տարբեր ժամանակաշրջաններում տեղի ունեցած կարեւոր իրադարձությունները»,- շեշտել է նա:

Ավետիք Իսահակյանը բազմաժանր գրող է. նա գրել է բանաստեղծություններ, պոեմներ, պատմվածքներ, առակներ ու հրապարակախոսական հոդվածներ: Նրա ստեղծագործությունները թարգմանվել են բազմաթիվ լեզուներով, դրանց հիման վրա գրվել են երգեր, սիմֆոնիաներ, այլ երաժշտական գործեր:

Նամականիշի տեխնիկական բնութագիրը.

320 ՀՀ դրամ անվանական արժեքով նամականիշի վրա պատկերված է հայ մեծանուն գրող, թարգմանիչ, հասարակական գործիչ, հրապարակախոս Ավետիք Իսահակյանը (1875-1957թթ.):

Նամականիշի վրա առկա են նաեւ «ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ», «150 ԱՄՅԱԿ» եւ «ՀԱՅ ԳՐՈՂ» գրառումները՝հայերեն եւ անգլերեն լեզուներով:

Թողարկման օրը՝ 11 նոյեմբերի 2025թ.

Դիզայնը՝ Վահագն Մկրտչյանի

Տպարանը՝ bpost Philately & Stamps Printing, Բելգիա

Չափսերը՝ 30,0 x 40,0 մմ

Մեկ թերթի վրա՝ 10 հ.

Տպաքանակը՝ 10 000 հ.

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՇՈՈՒ ԲԻՋՆԵՍ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԳԸ «ՄԱՆԿԱԿԱՆ ԵՎՐԱՏԵՍԻԼ» ՄՐՑՈՒՅԹԻ ՖԱՎՈՐԻՏՆԵՐԻՑ Է

«Վաու», «Աստված իմ», «ֆանտաստիկ», «ցնցող»... Աշխարհի տարբեր երկրներում օգտատերերն այսպես են արձագանքում «Մանկական Եվրատեսիլ 2025»-ի այս տարվա մեր պատվիրակի՝ Ալբերտի երգի առաջին իսկ վայրկյաններից: Տեսահոլովակն օրեր առաջ է հրապարակվել, բայց արդեն հասցրել է դառնալ ամենադիտվածը, սիրվել աշխարհի տարբեր երկրներում, իսկ Ալբերտն էլ մրցույթի ֆավորիտներից է: Հայտնում է Sputnik Արմենիան:

Նրանց հիացնում է ոչ միայն Ալբերտի հզոր կատարումը, այլեւ երգի թեման, ուղերձն ու անիմացիոն ֆենտեզի ոճի տեսահոլովակը, որը Անտուան դը Սենտ Էքզյուպերիի «Փոքրիկ իշխանի» մոտիվներով է:

Ինչպես իր հարցազրույցում Ալբերտն է ասում, երգը երազանքի մասին է, որին պետք է հավատալ, ոչ մի դեպքում չհանձնվել: Սա պատմություն է բարության եւ լույսի մասին, որը պետք է լինի մարդու ներսում եւ տարածվի աշխարհում: Յութուբյան ալիքներում մի քանի տասնյակ օտարերկրյա բլոգերների կտեսնեք, որոնք որպես անկախ դիտող միացնում են հայաստանյան պատվիրակի երգը, հիանում, հուզվում:

Ահա նրանց արձագանքը. «Ցնցված եմ, որ փոքրիկ տղան կարող է այսպես փոխանցել երգի ուղերձը», «Համաշխարհային հնչողություն ունի», «Առանց կանխակալ վերաբերմունքի՝ Հայաստանը հաղթելու իրական հնարավորություն ունի», «Եթե նա բեմում էլ այսպես երգի, կարծում եմ՝ կհաղթի», «Հիասքանչ էր, ես սիրեցի երաժշտությունը, տեսահոլովակը, անիմացիոն վիդեոպատմությունը», «Աստված իմ, ո՞վ է այս տղան», «Սա ուղղակի անհավատալի է», «Աստված իմ, փշաքաղվեցի: Սա հաղթող տարբերակ է»:

Բոլոր խիզախ սրտերին, որոնք երբեւէ չեն դադարում երազել... Տեսահոլովակի վերջում հղած ուղերձը հասնում է մարդկանց սրտերին ու հիշվում:

ՆՈՐ ՏԵՍԱՀՈԼՈՎԱԿ՝ Վ. ՏԵՐՅԱՆԻ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ

PROJECT LA-ն եւ Գոռ Սուջյանը նոր տեսահոլովակ են ներկայացրել: Երգը կոչվում է «Կեսգիշերին»: Խոսքերը՝ Վահան Տերյանի, երաժշտության հեղինակ՝ Լեւոն Արեւշատյան: Տեսահոլովակի ռեժիսորը Հայկ Սայադյանն է: Մի քանի ժամում տեսահոլովակը հավաքել էր շուրջ 10.000 դիտում. Ակնհայտ է, որ այն կդառնա հերթական սիրված երգը PROJECT LA-ի երկրպագուների, երաժշտասերների համար:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆ–ՀՈՒՆԳԱՐԻԱ ՀԱՆԴԻՊՈՒՄ

Իսպանական մրցավարական անձնակազմը կսպասարկի Աշխարհի 2026 թվականի առաջնության ընտրական փուլի եվրոպական գոտու Հայաստան-Հունգարիա հանդիպումը:

Ինչպես հայտնում են Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայից, խաղի մրցավարը Խոսե Մարիա Սանչեսն է: Նրան կօգնեն Ռաուլ Կաբանյերոն եւ Ինիգո Պրիետոն: Չորրորդ պաշտոնյան Խուան Մարտինես Մունուերան է: VAR համակարգի պատասխանատուներն են Կառլոս Դել Սերո Գրանդեն ու Վալենտին Գոմեսը:

Այսօր՝նոյեմբերի 13-ին, Եղիշե Մելիքյանի թիմը կհանդիպի Հունգարիայի հետ: Երեք օր անց մրցակցի հարկի տակ որակավորման փուլի վերջին խաղը կանցկացնենք Պորտուգալիայի հետ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ Մ–21 ՏԱՐԵԿԱՆՆԵՐԻ ԽԱՂԵՐ

Հայաստանի ֆուտբոլի երիտասարդական հավաքականն առաջիկա պաշտոնական հանդիպումները չի անցկացնի Արմավիրի քաղաքային մարզադաշտում:

Այս մասին հայտնում է Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան:

Հայաստանի Մ-21 հավաքականի՝ Չեռնոգորիայի եւ Շվեդիայի դեմ հանդիպումները տեղափոխվել են ՀՖՖ Տեխնիկական Կենտրոն/Ֆուտբոլի ակադեմիա՝ պայմանավորված Հակոբ Տոնոյանի անվան մարզադաշտի խոտածածկի վիճակով:

Չեռնոգորիայի Մ-21 հավաքականի դեմ հանդիպումը կկայանա նոյեմբերի 14-ին՝ ժամը 15:00-ին, Շվեդիայի Մ-21 հավաքականին կընդունեն նոյեմբերի 18-ին: Խաղը կմեկնարկի ժամը 15:00-ին:

ՌՈՆԱԼԴՈՒՆ ՊԱՐԶԱԲԱՆԵԼ Է

«Ալ-Նասրի» եւ Պորտուգալիայի հավաքականի հարձակվող Կրիշտիանու Ռոնալդուն պարզաբանել է կարիերայի ավարտի մասին իր խոսքերը: Նոյեմբերի սկզբին լրագրող Փիրս Մորգանին տված հարցազրույցում, երբ պորտուգալացուն հարցրել էին, թե երբ է նա ավարտելու կարիերան, նա պատասխանել էր՝«Շուտով»:

««Շուտով»-ն ինձ համար նշանակում է 10 տարի հետո: Մարդիկ կարծում են, որ երբ ես խոսում եմ կարիերայի մոտալուտ ավարտի մասին, նկատի ունեմ կես տարուց կամ մեկ տարուց: Կատակում եմ: Երբ հասնում ես որոշակի տարիքի, սկսում ես արագ հաշվել ամիսները: Ֆուտբոլում ես փորձում եմ հաճույք ստանալ գոլերից: Ինչպես գիտեք, ես 40 տարեկան եմ, եւ փորձում եմ վայելել յուրաքանչյուր պահ եւ շարժվել առաջ:

Կարծում եմ, որ մարմինս լավ վիճակում է: Ինչ վերաբերում է հավաքականում իմ խաղին, ես գոլեր եմ խփում եւ օգնում եմ թիմին: Ես ուզում եմ տիտղոսներ նվաճել: Սա իմ կյանքն է», - Ռոնալդուի խոսքերը Սաուդյան Արաբիայի TOURISE զբոսաշրջային ֆորումում տված հարցազրույցից մեջբերում է Mundo Deportivo պարբերականը:

● *Նոյեմբերի 22-ին՝20:00-ին, «Թատրոն տանիքում» տեղի կունենա «Մայրիկ, ես քեզ սիրում եմ / Հայրիկ, դու խենթ ես» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 6.000 -9000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ես ուզում եմ իմանալ, թե ինչ փաստաթղթեր են անհրաժեշտ որդեգրման պետական գրանցման համար, եւ որքան է կազմում պետական տուրքի դրույքաչափը: Խնդրում եմ նաեւ տեղեկացնել, թե ինչ ժամկետում է կատարվում որդեգրման պետական գրանցումը:

Մարինե Քյորողլյան (39 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ որդեգրման գրանցման համար պահանջվում է ներկայացնել՝

1) որդեգրողի (որդեգրողների) անձը հաստատող փաստաթղթերը (պատճենները),

2) դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը,

3) երեխայի ծննդյան ակտային գրանցման տեղեկանքը կամ ծննդի պետական վկայականը,

4) դիմողի անձը հաստատող փաստաթուղթը, եթե դիմումը ներկայացվում է լիազորված անձի միջոցով:

Միաժամանակ հայտնում ենք, որ որդեգրման պետական գրանցումը կատարվում է դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելու նույն աշխատանքային օրը: Օտարերկրյա քաղաքացիների եւ քաղաքացիություն չունեցող անձանց կողմից որդեգրման պետական գրանցման՝ ներառյալ վկայական տալու համար պետական տուրք չի գանձվում:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ որդեգրման պետական գրանցման համար հիմք է դատարանի՝ որդեգրման մասին օրինական ուժի մեջ մտած վճիռը: Որդեգրման պետական գրանցման համար դիմումը կարող է ներկայացվել որդեգրողի (որդեգրողների) կամ նրա լիազորած անձի միջոցով: Որդեգրման պետական գրանցումը կատարում է ԱՆ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալությունը: Դիմումները գործակալություն են ներկայացվում էլեկտրոնային եղանակով կամ սպասարկման կենտրոնների միջոցով:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Անչափահասին կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձին կենսաթոշակ նշանակելու համար ո՞վ պետք է դիմի կենսաթոշակ նշանակող մարմին:

Ժենյա Վանեցյան (52 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Անգործունակ կամ սահմանափակ գործունակ կամ մինչեւ 14 տարեկան անչափահաս անձին կենսաթոշակ նշանակելու համար նրա հաշվառման վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում գրավոր դիմում է ներկայացնում ծնողը (որդեգրողը կամ խնամակալը կամ հոգաբարձուն):

Եթե անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձի օրինական ներկայացուցիչը համապատասխան կազմակերպությունն է (մանկատունը կամ հոգեբուժարանը), որտեղ գտնվում է անչափահաս կամ անգործունակ կամ սահմանափակ գործունակ անձը, նրան կենսաթոշակ նշանակելու համար գրավոր դիմումը եւ անհրաժեշտ փաստաթղթերը կազմակերպության գտնվելու վայրի կենսաթոշակ նշանակող ստորաբաժանում է ներկայացնում այդ կազմակերպության ղեկավարը կամ նրա լիազորած անձը: 14 տարեկան անձն իրավունք ունի կենսաթոշակ նշանակելու համար դիմել անձամբ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Կենսաթոշակ նշանակելու համար բնակության վայրի մասին տեղեկանք չի պահանջվում, բավարար են անձնագրում քաղաքացու անձնական տվյալների եւ նրա հաշվառման վայրի մասին նշում պարունակող էջերի պատճենները:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ «Ժողովուրդ» օրաթերթի

«Ժողովուրդ» օրաթերթի տեսախցիկը արձանագրել է, որ «Եվրանեսթ» վեհաժողովից հետո ԱԺ լրագրողների օթյակի աթոռները, որոնք հանվել էին, վերատեղադրելուց հետո կոտրվել են:

ԱԺ նախագահի խոսնակը «Ժողովուրդ»-ին հայտնեց, որ Ալեն Սիմոնյանը տեղյակ է խնդրից եւ հնարավորինս արագ լուծում կտրվի:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 3 - 6 +13 + 17
Կոտայքի լեռներ	- 3 + 2 +14 + 17
Կոտայքի նախալեռներ	+ 3 + 6 +16 + 18
Գեղարքունիք	0 - 4 +14 + 17
Լոռի	0 + 4 +17 + 20
Տավուշ	+ 5 + 8 +18 + 21
Արագածոտնի լեռներ	0 - 4 +14 + 17
Արագածոտնի նախալեռներ	+ 2 + 6 +15 + 19

Արարատ	0 + 3 +19 + 21
Արմավիր	0 + 2 +19 + 21
Վայոց ձորի լեռներ	- 1 + 2 +15 + 17
Վայոց ձորի նախալեռներ	- 3 + 3 +18 + 21
Սյունիքի նախալեռներ	0 + 3 +18 + 23
Սյունիքի հովիտներ	+ 5 + 10 +24 + 28
ԼՂՀ	+ 5 + 10 +20 + 22
Երեւան	+9 + 10 +15 + 17

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **12.11.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*